Հաստատում եմ՝

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ս.Բուդաղյան

«____»_____ 20____թ.

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ն.Մուրադյան

«____»_____ 20____թ.

2023-2027

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐՄԱՎԻՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ

ՔՈԼԵՋ ՊՈՍԱԿ

2023-2027

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Արմավիրի արվեստի պետական քոլեջ»ՊՈԱԿ-ը մարզի արվեստի միակ ուսանողակենտրոն կրթօջախ է, որի առաքելությունն է պատրաստել ժամանակի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետներ, ովքեր կունենան մշակութային պահանջներին համահունչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Արմավիրի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հավակնում է լինել ուսանողակենտրոն, բարձրակարգ մշակութային միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որը կնպաստի ազգային , հոգևոր արժեքների պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- Ուսանողի հաջողություն
- Գերազանցություն
- Համագործակցություն
- Պատասխանատվություն
- Նորարարություն և ստեղծարարություն

I. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր: Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը:

ԽՆԴԻՐ 1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ներգրավել բարձր ներուժ ունեցող դիմորդների՝ ապահովելով ներառականությունը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Սահմանել ընդունելության բարձրացված շեմ՝ բարձր ներուժ ունեցող դիմորդների ներգրավման համար:
2. Ապահովել կրթության հասանելիություն սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների համար:
3. Կազմակերպել դիմորդների մասնագիտական ինքնորոշման միջոցառումներ:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Ընդունելության բարձր շեմ և մրցութային ցուցանիշ:*
2. *Ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող դիմորդների ընդունելություն:*
3. *Մասնագիտական ինքնորոշման կենտրոնի առկայություն:*

ԽՆԴԻՐ 2. ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջարկին համահունչ:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Իրականացնել մասնագիտությունների ճշգրտում և առանձնացնել մասնա-

գիտական ուղղություններ՝ հիմք համարելով ուսումնական ընթացքի առանձնահատկությունները:

2. Ընդլայնել ուսուցանվող մասնագիտությունների ցանկն ըստ շահառուների պահանջարկի, աշխատաշուկայի զարգացման և մարզի սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարային պլանի.

Դասիչ	Մասնագիտություն	Դասիչ	Որակավորում	Նախատեսվող ժամանակահատված
2-90.03.03	Քանդակագործություն	2-90.03.03.01-4	Քանդակագործ-դասավանդող	
2-90.03.04	Զարդային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	2-90.03.04.01-4	Նկարիչ-ձևավորող	

Ներկայում քոլեջը վերոգրյալ գործառույթների հիման վրա պետական բյուջեից տրամադրվող հատկացումների և վճարովի ուսուցման միջոցների հաշվին իրականացնում է հետևյալ ծառայությունները.

Միջին մասնագիտական կրթություն՝ ըստ հետևյալ մասնագիտությունների և մասնագիտացումների գծով.

Մասնագիտու-թյան դասիչը	Մասնագիտության անվանումը	Որակավորման դասիչը	Որակավորման անվանումը	Կրթության ձևը, ուսուցման տևողությունը և ուսուցման հիմքը
Միջին մասնագիտական				
0215.06.5	Գործիքային կատարողական արվեստ՝ /ըստ գործիքների տեսակների/՝	0215.06.01.5	Երաժիշտ կատարող, դասավանդող /ըստ գործիքների տեսակների/	Առկա 4 տարի՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա
	դաշնամուր			
	Լարային գործիքներ			
	Փողային գործիքներ			
	Ժողովրդական գործիքներ			
0215.01.5	Երգեցողություն	0215.01.01.5	Երգիչ-կատարող	
0215.02.5	Երգչախմբավարություն	0215.02.01.5	Խմբավար-դասավանդող	
0215.03.5	Երաժշտության տեսություն	0215.03.01.5	Դասավանդող՝ երաժշտագիտական տեսական առարկաների	
0215.05.5	Պարարվեստ	0215.05.02.5	Դերասան՝ ժողովրդական պարային համույթի	Առկա 3 տարի հիմնական 2 տարի միջնակարգ կրթության հիմքի վրա

0213.02.5	Գեղանկարչություն	0213.02.01.5	Նկարիչ դասավանդող	Առկա, 5 տարի հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա
0212.02.5	Դիզայն	0212.01.01.5	Դիզայներ	Առկա, 4 տարի հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա
2-90.01.07	Դերասանական արվեստ	2-90.01.07.01-4	Դերասան	Առկա, 4 տարի հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա
2-90.01.05	Էստրադային արվեստ	2-90.01.05.01-4	Դերասան՝ էստրադայի	Առկա, 4 տարի հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա

3. Իրականացնել գործատու կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների քոլեջի շրջանավարտներից և կրթական ծրագրերից բավարարվածության վերաբերյալ համալիր ուսումնասիրություն:

ԽՆԴԻՐ 3. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կատարել որակի ներքին հավաստման համակարգի մշտադիտարկում:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Աջակցել քոլեջի կրթության որակի ներքին ապահովման աշխատանքներին՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպչական գործառույթների սահմանմամբ:
2. Իրականացնել քոլեջի կրթական գործունեության ինքնաուսումնասիրման, ինքնավերլուծության, ինքնագնահատման գործընթացների մշտա-դիտարկում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Քոլեջի գործունեության ինքնավերլուծություն, ամենամյա գնահատման գործընթացի իրականացում և դրան համապատասխան դասախոսական անձնակազմի խրախուսման համակարգ:*

II. ՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ

Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

ԽՆԴԻՐ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ապահովել մասնագիտական համայնքի կարողությունների զարգացումը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Պարբերաբար իրականացնել ուսումնաօժանդակ և վարչական համակազմի վերապատրաստումներ՝ հիմնված կարիքների գնահատման վրա և համահունչ «Արմավիրի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի զարգացման գերակայություններին:
2. Քոլեջում զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Վարչական և ուսումնաօժանդակ համակազմի աշխատակիցների ներգրավում ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից կազմակերպվող ամենամյա վերապատրաստումներին:*
2. *Առաջավոր փորձ ունեցող մասնագետների կողմից ներքոլեջային վերապատրաստումների կազմակերպում, փորձի փոխանակում:*

ԽՆԴԻՐ 2.

Բարձրացնել աշխատակիցների սոցիալական մակարդակը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Զարգացնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատվության տարբերակված մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության՝ մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով:
2. Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:
3. Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հանգստի պայմանները բոլոր աշխատողների և սովորողների համար:

III ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունվետ գործունեությունը խթանելու համար:

ԽՆԴԻՐ 1. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել զարգացմանը միտված ֆիզիկական միջավայր:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Գնահատել քոլեջի լսարանային ֆոնդի առկա վիճակը և իրականացնել դրանց փուլային արդիականանացում՝ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի նոր կարիքներին համապատասխան:
2. Ընդլայնել քոլեջի գրադարանի ուսումնական ռեսուրսները և զարգացնել թվային գրադարանի գործառույթները:
3. Բարձրացնել անվտանգության մակարդակը ԱԱՊՔ ՊՈԱԿ-ի տարածքում և հանգստյան գոտիներում:
4. Մշակել երաժշտական գործիքների, գեղանկարչական գույքի (մոլբերտներ, տումբաներ, կավե անատոմիական ֆիգուրներ, կիսանդրեր, զարդաքանդակներ, մոլիաժներ և այլն) ձեռքբերման ծրագիր:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Տարեկան առնվազն 1 արդիականացված լսարան:*
2. *Գրադարանում առկա գրականության թվայնացման աշխատանքներ:*
3. *ԱԱՊՔ ՊՈԱԿ-ի ընդհանուր տարածքի տեսավերահսկում:*
4. *Համագործակցություն տեղային, համահայկական և միջազգային նվիրատու կազմակերպությունների հետ:*

ԽՆԴԻՐ 2. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Կատարելագործել քոլեջի գործող վեբ կայքը՝ մատչելի դարձնել նրա հասանելիությունը:
2. Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար:

IV ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական խորհրդի աշխատանքները:

ԽՆԴԻՐ 1. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:
2. Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը՝ շեշտադրելով մշակութային, ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները, բարձրացնել այդ միջոցառումների մասնակցության որակի և պատրաստվածության աստիճանը:
3. Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի, խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը:
4. Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը:
5. Ապահովել շրջանավարտների հետ քոլեջի շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից տարաբնույթ աջակցության նախաձեռնու-թյունները:
6. Հիմնել ուսանողական թատրոն:

ՑՈՒՑՉՆԵՐ

1. *Կարիերայի կենտրոնի ակտիվ գործունեություն:*
2. *Բաց դասերի պլանավորում՝ միտված հայրենաճանաչողությանը և ինտելեկտուալ զարգացվածության աստիճանի բարձրացմանը:*
3. *Ձեռներեցության մոդուլի ուսուցանում:*
4. *Դերասանական արվեստ և էստրադային արվեստ մասնագիտությամբ ուսանողների ներուժի կիրառում:*

ԽՆԴԻՐ 2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Ստեղծել նպաստավոր պայմաններ Ուսանողական խորհուրդի գործունեության համար
2. Աջակցել ուսանողների համագործակցությանը հանրապետական, միջքոլեջային և համահայկական կազմակերպությունների հետ

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ինտեգրում կառավարման խորհրդի կազմում:*
2. *Տարաբնույթ միջոցառումների և մրցույթների ակտիվ մասնակցություն:*

V. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Ապահովել քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, ամրապնդել գործակցային կապերը աշխատաշուկայի հետ, խթանել քոլեջի գործունեության միջազգայնացմանը:

ԽՆԴԻՐ 1. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Զարգացնել քոլեջի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Մշակել քոլեջի միջազգային համագործակցության գերակա ուղղությունները՝ քոլեջի զարգացման հեռանկարներին համահունչ:
2. Ընդլայնել քոլեջի միջազգային գործունեության դաշտը, նպաստել բոլոր բաժինների ներգրավմանը միջազգային համագործակցության ծրագրերում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Միջազգային մրցույթ-փառատոնների մասնակցություն: Նոր կապերի հաստատում:*

ԽՆԴԻՐ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության կայուն համակարգ և նպաստել շահակիցների կարիերայի զարգացմանը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. «Արմավիրի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության ընդհանուր համակարգ:
2. Իրականացնել վերջին 5 տարիների քոլեջի շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություն:
3. Զարգացնել կապը շրջանավարտների հետ և ապահովել համագործակցությունը տարբեր բնագավառներում:
4. Համակարգել ամենամյա էքսպոների և աշխատանքային տոնավաճառների կազմակերպման և իրականացման գործընթացները:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. *Ձեռնարկությունների հետ համատեղ իրականացվող նախագծերում ներգրավված ուսանողների թվաքանակի աճ:*
2. *ԱԱՊՔ ՊՈԱԿ-ի շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման (մոնիթորինգի) ներդրված համակարգ:*

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նախաձեռնել քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնում և դրանց բազմազանեցում: Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայութնունների որակը:

ԽՆԴԻՐ 1. Մեծացնել քոլեջի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Ընդլայնել և շարունակաբար զարգացնել քոլեջի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման քաղաքականությունը՝ կրթական, ստեղծագործական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում:
2. Ընդլայնել քոլեջի վճարովի ծառայությունների տեսականին և ծավալները, բարձրացնել այդ ծառայությունների եկամտաբերությունը:
3. Ակտիվացնել քոլեջի մասնակցությունը կրթական, ստեղծագործական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող դրամաշնորհային ծրագրերին:
4. Բարձրացնել քոլեջի կառավարման արդյունավետությունը, ապահովել կառավարման տեղեկատվական համակարգերի ընդլայնված կիրառությունը:
5. Ուսումնասիրել քոլեջի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր, իրականացնել կարճաժամկետ ծրագրեր:

ԽՆԴԻՐ 2. Ներգրավել շրջանավարտներին, նվիրատու կազմակերպություններին և անհատներին՝ քոլեջում ներդրումներ կատարելու համար:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Ամրապնդել կապը քոլեջի շրջանավարտների հետ, ստեղծել շրջանավարտների տվյալների էլեկտրոնային տեղեկատվական և հաղորդակցման համակարգ:
2. Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ քոլեջի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով

նրանց կողմից քոլեջին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:

3. Պարբերաբար նախաձեռնել և իրականացնել ծրագրեր և միջոցառումներ՝ շրջանավարտների, բարերարների և այլ աջակիցների նվիրատվությունները, շնորհները և ներդրումային ծրագրերը լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար, նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:

ԽՆԴԻՐ 3. Ապահովել ուսումնական հաստատությունում գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Գործողություններ/ միջոցառումներ

1. Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը
2. Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը քոլեջում կատարվող գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը քոլեջի կառավարման համակարգում
3. Նպաստել արդեն իսկ մշակված «Քոլեջի աշխատողների և ուսանողների էթիկայի կանոնակարգ»-ի լիակատար իրականացմանը: